ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3748-Ա « 12 » սեպտեմբերի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
12.09. 2025թ.
հ. 3748 -Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Աստղիկ Հովհաննիսյան /լիազորված անձ/ Պողոս Ավետիսյան	Հայրիկ Մուրադյան /Արաբկիր 43-րդ/ փողոց, հ.53	բնակելի տուն	Պողոս Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայրիկ Մուրադյան /Արաբկիր 43-րդ/ փողոցի հ.53 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.25072023-01-0294/ բաժանման հատակագծով առանձնացվող 66.7քմ մակերեսով մաս տրամադրել հասցե՝ Հայրիկ Մուրադյան փողոց, հ.53/1	01033JBNQJ9P	
2	Էդուարդ Խաչատրյան /լիազորված անձ/ Լաուրա Դավթյան	Մամիկոնյանց փողոց, հ.49/1 շենք, հ.45	բնակարան	Լաուրա Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող, Մամիկոնյանց փողոցի հ.49/1 շենքի հ.45 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.18082025-01-0088, ընդ. բաժն. 2.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 35.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Մամիկոնյանց փողոց, հ.49/1 շենք, բն.45/1	01033JTJWLZA	
3	Տիգրան Հարությունյան	Մյասնիկյան պողոտա, հհ.4/16, 4/17, 4/19, 4/21, 4/22 և 4/31	հողամաս	Տիգրան Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Մյասնիկյան պողոտայի հհ.4/16, 4/17, 4/19, 4/21, 4/22 և 4/31 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.07042025-01-0200, վկ. հ.03102024-01-0047, վկ. հ.03102024-01-0478, վկ. հ.11082025-01-0309, վկ. հ.20032020-01-0121 և վկ. հ.08042025-01-0063/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ալ. Մյասնիկյան պողոտա, հ.4/16	010634V2VVCF	

4	Նարինե Տոմերյան /լիազորված անձ/ Լյուդմիլա Մարգարյան /սեփականատեր/	Ա. Տիգրանյան փողոց, նրբանցք, հ.11	բնակելի տուն	Լյուդմիլա Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող, Ա. Տիգրանյան փողոցի նրբանցքի հ.11 հասցեում գտնվող բնակելի տանը /վկ. հ.05102022-01-0215/ տրամադրել հասցե՝ Ա. Տիգրանյան փողոց, նրբանցք, հ.10/1	0112376HFDB5	
5	Միեր Ղազարյան /լիազորված անձ/ Հովհաննես Գյուլումյան /սեփականատեր/	Նոր Խարբերդի այգետարածք, 14-րդ փողոց, հ.99	հողամաս	Հովհաննես Գյուլումյանին հատկացված, Նոր Խարբերդի այգետարածքի 14-րդ փողոցի հ.99 տեղամասի 512.0քմ մակերեսով հողամասին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 12.07.2024թ. հ. Հ-7458 տեղեկանք/ տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 14-րդ փողոց, հ.7/1	01113HK9SHEJ	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**